ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Հ.3

ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտական խորհրդի 06.04.21թ. կայացած նիստի

Նիստը տեղի էր ունենում առցանց

Նիստին մասնակցում էին գիտական խորհրդի 38անդամներից 32-ը:

Նիստը նախագահում էր տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Կ. Եղոյանը

Լսեցին՝ ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի <Կառավարման և գործարարության> ամբիոնի վարիչի պաշտոնի տեղակալման համար հայտարարված մրցույթի հարցը:

Արտահատվեցին՝ ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի նախագահ, պրոֆ. Հ.Մնացականյանը, որը ներկայացրեց մրցույթի միակ մասնակցի՝ Կառլեն Գագիկի Խաչատրյանի անձնական գործերի տվյալները և մրցութային հանձնաժողովի որոշումն այն մասին, որ նա թույլատրվում է մասնակցելու ֆակուլտետի գիտական խորհրդի քննարկմանը: Ելույթ ունեցան նաև ֆակուլտետի դեկան, տ.գ.դ., պրոֆ. Հ.Սարգսյանը, պրոֆ. Հ. Մնացականյանը, դոց. Կ.Զուրաբյանը, դոց. Հ.Հովհաննիսյանը, ասպիրանտ Մ.Փանոսյանը;

Որոշեցին՝ ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի <Կառավարման և գործարարության> ամբիոնի վարիչի տեղի համար հավակնող Կառլեն Գագիկի Խաչատրյանին թույլատրել մասնակցելու փակ, գաղտնի քվեարկությանը :

Լսեցին՝ Նիստի նախագահող Կ.Եղոյանի հաղորդումը քվեարկության արդյունքների մասին;

Քվեարկությանը մասնակցել են նիստինն ներկա գիտխորհրդի 32 անդամներից 32-ը:

Ձայները բաշխվել են հետևյալ կերպ.

Կառլեն Գագիկի Խաչատրյանի օգտին քվեարկել են 32-ը, դեմ չկա, անվավեր քվեաթերթիկներ չկան:

Որոշեցին՝

1. Հաստատել ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտական խորհրդի փակ, գաղտնի քվեարկության արդյունքները:
2. Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Կառլեն Գակիկի Խաչատրյանին համարել ընտրված կառավարման և գործարարության ամբիոնի վարիչի պաշտոնում:
3. Հաստատել հետևյալ եզրակացությունը: Հաշվի առնելով, որ տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Կառլեն Գագիկի Խաչատրյանը 2011թվականից մինչ օրս աշխատում է ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում, 2014 թ-ից ունի դոցենտի գիտական կոչում, 06.04.2016թ.-ից մինչ օրս ԵՊՀ ՏԿՖ Կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ է, հեղինակ է 1 մենագրության, 1 ուսումնական ձեռնարկի և երկու տասնյակից ավելի գիտական հոդվածներ, 2020թ.-ից ԵՊՀ Հոգաբարձուների խորհրդի անդամ է, վարում է ակտիվ հասարակական գործունեություն՝ ղեկավարում է 2 հասարակական կազմակերպություն, 2011 թ-ից հանդիսանում է ԵՊՀ երիտասարդ գիտնականների միավորման հիմնադիրը և նախագահը, 2011 թվականից հանդիսանում է ՀՀ նախագահի հովանու ներքո իրականացվող երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրի ղեկավար մարմնի պատասխանատու քարտուղար և նկատի ունենալով ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի որոշումն ու ֆակուլտետի գիտխորհրդի փակ, գաղտնի քվեարկության արդյունքները, դիմել համալսարանի գիտխորհրդին տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Կառլեն Գագիկի Խաչատրյանին հաստատելու տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի <Կառավարման և գործարարության> ամբիոնի վարիչի պաշտոնում:

Նիստի նախագահ
տ.գ.թ. դոցենտ Կ.Շ.Եղոյան

Ֆակուլտետի գիտխորհրդի
քարտուղար, տ.գ.թ., պրոֆ. Ա.Հ.Համբարձումյան